ՄՅԱՍՆԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԵՍՈՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 12.12.1987

Ծննդավայր՝ ՀՀ, գյուղ Աշոցք

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մյասնիկ Արամայիսի Եսոյանը** Քանաքեռավանի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 2004 թ. նպատակային ընդունելությամբ ընդունվել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը:

2008-2010 թթ. ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետուի մագիստրատուրայի բաժնում:

2010 թ. ձևակերպվել է որպես ասպիրանտ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

2011 թ. ուսումնասիրել է արաբերեն լեզու Դամասկոսի պետական համալսարանում:

2013 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված Սիրիայի արաբալեզու մամուլում Հայկական հարցի լուսաբանմանը 1908-1914 թթ.:

2020 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

Մ. Եսոյանը 2014 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես գիտաշխատող, այնուհետև նշանակվել է ավագ գիտաշխատողի պաշտոնում:

2015 թվականից Մ. Եսոյանը վարում է Հայաստանի եվրոպական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

Մ. Եսոյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Մերձավոր Արևելքի երկրների հայալեզու և արաբալեզու մամուլի նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները:

Մ. Եսոյանը հեղինակ է **4** մենագրությունների, ավելի քան **20** գիտական հոդվածների, որից՝ **1** ընդգրկված է **Scopus/Webofscience (Q 1, 2026)** ՄԳԾ-ում:

Մ. Եսոյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային շուրջ երկու տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում և այլն:

Մ. Եսոյանը պարգևատրվել է Հայաստանի եվրոպական համալսարանի հուշամեդալով:

Մ. Եսոյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի որդի և դուստր: